II

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ «ԱՇԽԱՏԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երիտթուրքական հեղաշրջումից անմիջապես հետո Արևմտյան Հայաստանի նահանգային և գավառական կենտրոններում որոշ բարենպաստ հանգամանքներ ձևավորվեցին հայ գրական, կրթական, մշակութային կյանքի զարթոնքի և զարգացման համար:

Առաջացած նոր պայմաններում Վանում սկսում է լույս տեսնել «Աշխատանք» անունով պարբերականը (1910–1915 թթ.)[*]: Այն շաբաթաթերթ էր և ուներ գրական-հասարակական, քաղաքական, տնտեսական ուղղվածություն: Այն հանդիսանում էր Հ. Յ. Դաշնակցության տեղական օրգանը: Սակայն վերոնշյալ հանգամանքը խոչընդոտ չէր, որպեսզի պարբերականը հանդես գար առավել լայնախոհ ու լայնընդգրկուն դիրքերից: Խմբագրապետն Իշխան Միքայելյանն էր՝ կորովի դաշնակցական գործիչներից մեկը:

Թերթի էջերում մեկնաբանվում և լուսաբանվում էին այն խնդիրներն ու հիմնահարցերը, որոնք հուզում էին Վանի ազգաբնակչությանը, արդիական էին վիլայեթի հասարակական-քաղաքական, ինչպես նաև՝ առօրյա-ամենօրյա կյանքում:

Պարբերականի անդրանիկ համարը լույս տեսավ 1910 թ. նոյեմբերի 7-ին՝ կիրակի օրը: Խմբագրական հոդվածում նշվում էին այն սկզբունքներն ու մոտեցումները, որով առաջնորդվելու էր խմբագրությունը: Ըստ այդմ, նշվում էր, որ «միակ սկզբունք մը ունի, պետութեան ամբողջութիւն ներկայացնող բոլոր մանր ու խոշոր ազգերի իրաւահաւասարութիւնը: Ազգերի ազատ ու անկաշկանդ զարգացումը, իրենց ազգային ուրույն յատկությունների, իրենց ազգային ոգու: «Աշխատանք»-ը կանգնած լինելով լայն ազգայնական իրաւունքի տեսակէտին, միանգամայն հակառակ կը լինի նեղ ազգայնական ու կրօնական ձգտումներին, որոնք կը հասնին շովէնութեան: Թերթը հնարաւորութեան, ոյժերի և պայմանների թոյլատրութեան չափով պիտի արձագանք տա հասարակական բոլոր խնդիրներին, միշտ առաջադիմական, լայն ազատական տեսակէտներից առաջնորդուելով»[1]:

Ահա այսպիսի զգուշավոր դիրք գրավելով՝ պարբերականը ձգտում էր չընդհարվել տիրող պաշտոնական տրամադրությունների և երիտթուրքական հեղափոխության հռչակած ընդհանուր կարգախոսների հետ: Մանավանդ հրատարակման առա-

---

[1] *«Աշխատանք», 1910, № 1, էջ 6:*

ջին տարիներին՝ 1910–1912 թթ., այդ զգուշավոր կեցվածքն ու մոտեցումը հետևողականորեն պահպանվում էր: Հենց առաջին իսկ համարում վերոնշյալ տրամադրություններն զգացվում էին ակնհայտորեն: Դրան զուգահեռ պարբերականը միաժամանակ հասկացնում էր հայ հասարակական շրջանների խորին անբավարարությունն ու հիասթափությունը թուրքական հեղափոխության կիսատ-պռատ, անավարտ ընթացքից. «Ամեն մի վերածնուող երկիր, ամեն մի մանուկ հասարակութիւն իւր զարգացման շեմին, իւր քաղաքակրթութեան առաջին քայլերին ունենում է խարխափումներ, թիւրիմաց որոնումներ և անորոշութեան մտատանջումներ: Այդ անորոշ մտատանջումներն ու խարխափումները աւելի ուժեղ, աւելի թափով են մանաւանդ այն ժամանակ, երբ յեղաշրջումից չի կատարուել որոշ պարզ ու սիստեմատիկ մտային աշխատանք, ստեղծագործիչ գաղափարական գործ»[2]: Երիտթուրքերի կատարած հեղափոխությունն է նկատի առնված, երբ նշված է, որ հեղաշրջումները, եթե միաժամանակ վարչական, տնտեսական զարգացման կից արդիւնք չեն հասարակական, ժողովրդական, մտավոր, հոգեկան զարգացումին, «իրանց արդիւնքի մէջ պիտի լինին շատ մակերևուլթային, շատ թեթև և անկայուն»[3]: Այո, ճիշտ այդպիսի մակերևութային ընթացք ունեցավ երիտթուրքական հեղափոխությունը, քանզի այն խորքային բնույթ չուներ և նրան, ըստ էության, մասնակից չեղան ժողովրդական լայն զանգվածները: Այնուամենայնիվ, Արևմտահայաստանի խորքում՝ Վանում, իր ուղին սկսած պարբերականն ազդարարում էր, որ պետք է պաշտպան կանգնի նույն այդ պետության քաղաքակրթական բոլոր ձգտումներին և ստեղծագործիչ ամեն մի աշխատանքի, որոնք նպատակ կունենան առաջադիմությունը և քաղաքակրթությունն ապահովելու օսմանյան տերության մեջ:

Առաջին իսկ համարից «Աշխատանքը» լուրջ ու սևեռված ուշադրություն էր դարձնում հողային հարցի շուրջ ծավալված քննարկումների և իրադարձությունների ընթացքին: Ըստ այդմ, նշվում էր, որ «Անատոլուի հողային հարցով շահագրգռուած խոշոր տարրերը հայերն ու քիւրտերն են: Եւ այդ խնդիրները համարեայ բոլոր վայրերում ոչ թէ ունի ազգային, այլ կեղեքողների եւ կեղեքուողի հանգամանք»[4]: Սա իրավացի դիտարկում է: Զարգացնելով սույն միտքը՝ նշվում է, որ առանց ճշմարտությունը «յեղաթիւրած լինելու կարող ենք պնդել, որ անպայման հողային վէճերի մեծագոյն մասը քիւրտերի շուրջն է»[5]:

Պարբերականի վերլուծաբանը (Ա. Մարմարյան), խորությամբ ուսումնասիրելով հիմնահարցը, կատարում է ճշմարիտ եզրահանգումներ. «Վերցրէք ամբողջ աշիրաթային կազմակերպութիւը, սկսած Պարսկաստանի սահմանագլխից մինչեւ երկրի

---

[2] *Նույն տեղում, էջ 3:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում, էջ 13:*

[5] *Նույն տեղում, էջ 14:*

ներսերը... եւ դուք ամէն տեղ կը տեսնէք ժողովրդական հոծ մեծամասնութիւն զուրկ հողային սեփականութիւնից եւ տնտեսութեան բոլոր միջոցներից»[6]: Այսինքն, եթե քրդերի մեծագույն մասը զրկված է հողից, սեփականությունից և տնտեսությունից, ուրեմն այդ ժողովուրդը, վերջին հաշվով, չի կարող տոգորված լինել խաղաղասիրական կայուն զգացումներով և հոգեպես չի կարող հանգիստ մնալ, խաղաղ ապրել: Ըստ թերթի դիտարկման, պետությունը պարտավոր է կույր չձևանալ, խորին ուշադրություն դարձնել այս կնճռոտ և ցավոտ հարցին:

Եվ պետք է լավ ըմբռնել, որ հողային հարցի վերաբերյալ իշխանությունների բռնած «տատանող ու երկդիմի դիրքը միայն պատճառ է դառնում ազգային ատելութիւնների եւ պետական յառաջադիմութեան խոչընդոտ հանդիսանում»[7]: Դա այդպես է, անկասկած, քանզի հողային հարցի լուծումը միաժամանակ ազգերի, ցեղերի ու ժողովուրդների մեջ հարաբերության կանոնավորության մշակում է նշանակում: Հետագայում ևս «Քրդերը» խորագրի ներքո պարբերականի էջերում ակտիվ ու շահագրգիռ քննարկումներ էին ընթանում: Պարբերականն ընդունում էր, որ օսմանյան պետական ու հասարակական-քաղաքական կարևոր խնդիրներից մեկը քրդական հարցն է՝ շնորհիվ իր «անորոշութեան խոշոր տարակուսանքների և վարանոտութեան առիթ է տալիս»[8]: Փորձում է մեղմացնել քուրդ ժողովրդի, քրդական ցեղախմբերի շուրջ ստեղծված ծանր ու դաժան պատկերացումները՝ նշելով, թե «այդ ներկայ քաղաքական մտքով դժբախտ, իր քաղաքական ըմբռնումներով աղքատ, իր տնտեսական վիճակով մեծ մասամբ սնանկ ժողովրդի մասին ազգովին... գոյացել է յաւիտենական մեղադրանքներ, որոնք հասարակական ճշմարտութիւնների կերպարանք ստանալով տիրապետում են մտքերին»[9]: «Աշխատանքը» ընդգծում է, որ դասակարգային մոտեցում և տարբերակում չի դրվում, այլ մեղադրանքը հասցեագրվում է քրդական ամբողջ հասարակությանը, ողջ քուրդ ժողովրդին. «Թիւրքիայում առհասարակ հասարակական, անհատական պատասխանատուութիւնը շատ արմատական կերպով է ըմբռնուած: Ազգը – ազգ է, ցեղը ցեղ: Եւ դրանից դուրս դասակարգ, որոշ հատուած կամ անհատ բոլորովին չի հասկացւում: Բավական է մի որեւէ ազգից, մի դասակարգ կամ անհատ պատճառ տայ որեւէ երեւոյթի եւ մեղադրանքը կամ պատասխանատուութիւնը կը ծանրանայ ամբողջ ազգութեան վրայ»[10]: Ասել է թե քրդական ամբողջ հասարակությունը չէ, որ ոճրագործ է, հանցագործ, զբաղված հարևան ցեղերին ու ժողովուրդներին թալանելով: Ավելին, այն տեսակետն է պաշտպանվում, որ քուրդ ժողովրդի զգալի մասը «մի ջախջախիչ մեծամասնութիւն,

---

[6] *Նույն տեղում:*

[7] *Նույն տեղում, էջ 15:*

[8] *«Աշխատանք», 1910, № 2, էջ 7:*

[9] *Նույն տեղում:*

[10] *Նույն տեղում:*

որը կապված է հողային տնտեսության հետ, որը ո՛չ թէ սիրում է ընդհարում, կոտորած, այլ զզւում է դրանից, այլ փախչում է այդ ձեւի կեանքից: Եւ այդ ոճրագործ կոչուած ժողովրդի այդ հսկայ զանգւածը շահագրգռված է ու սիրո՛ւմ է խաղաղութիւնը»[11]: Այս մոտեցումով ու տրամադրվածությամբ պարբերականը փորձում էր մեղմացուցիչ երանգներ հաղորդել հայ-քրդական երկարամյա սրված հակամարտությանը: Պատահական չի հնչում հետևյալ դիտարկումը. «Չէնք ուրանում որ հայկական ողբերգութեան ամբողջ ընթացքում քրտերը սիստեմատիկ ոճիրների անօրինակ նմուշներ են հրապարակ դրել... Եւ վերջապէս հենց այդ հսկայ ողբերգութեան ընթացքին, մի՞թէ կարելի է մեղադրել քիւրտ ժողովրդին ամբողջովին»[12]:

Քրդերի հանդեպ մեղմ, բարյացակամ մոտեցում դրսևորելու այս դիրքորոշումը հետագայում ևս շարունակվեց «Աշխատանք» պարբերականի էջերում: Այսպես, 1910 թ. նոյեմբերի 21-ին «Քրդերը» ընդհանուր խորագրի ներքո կարդում ենք հետևյալը. «... Իսկ քիւրտ հոծ երկրագործական մասսան ոչ միայն ոճրագործ չէ, այլ ամէն տեղ օժտուած է խաղաղ ապրելու բոլոր լաւագոյն զգացումներով»[13]: Ըստ որում, բացահայտորեն այն տեսակետն է արտահայտվում, թե խաղաղ տնտեսությամբ ապրող քուրդ ժողովրդի մեծամասնությունը ոչ միայն հարգում է սեփականությունը, այլև ատում է ավազակությունը և թալանը՝ ուրիշի սեփականության հափշտակումը: Ավազակ համարելու պնդումը, ըստ պարբերականի, «մի վերին աստիճանի անարդար մեղադրանք է քրդութեան հասցէին»[14]: Չնայած քուրդ ժողովրդի հանդեպ որդեգրած սույն բարյացակամ դիրքորոշմանը՝ այնուամենայնիվ, շաբաթաթերթի էջերում տեղ էին գտնում վերջիններիս կատարած վայրագություններն ընդունող և դատապարտող նյութեր: Այսպես, 1910 թ. նոյեմբերի 28-ին «Մոկսի յաւիտենական ցեցն ու պատուհասը» վերնագրով հրապարակման մեջ, նշվում է, որ երիտթուրքական հեղափոխությունից հետո Տաճկաստանի բոլոր գավառները փոքր-ինչ խաղաղվեցին, Մոկսը, ընդհակառակը, ավելի դժբախտ և ներքնապես առավել խռովահույզ վիճակ կներկայացնե, քան առաջ: Եվ այդ դրությունը տիրում է թե՛ Մոկսի հայ ազգաբնակչության ներքին կյանքում, և թե՛ քուրդ հասարակության մեջ, սակայն «ցաւ է մեզ ասել, որ վերջերս արդէն խռովութիւնը ծայրայեղութեան է հասած եւ հայ ու քիւրտ հասարակութիւնները արդէն իսկ լարուած դրութեան մէջ են»[15]: Անգամ այս դեպքում ևս դասակարգային մոտեցման սկզբունքը մնում է ուժի մեջ, քանզի նշվում է, որ Մուրթուլա բեյն անխտիր համատեղ թալանում է հայերին և քրդերին ու ամեն տարի միմյանց դեմ հանելով, նրանց եղբայրասպան կռիվների մղելով՝ «կզբաղեցնէ, որ մի-

---

[11] *Նույն տեղում:*

[12] *Նույն տեղում, էջ 14:*

[13] *«Աշխատանք», 1910, № 3, էջ 8:*

[14] *Նույն տեղում:*

[15] *«Աշխատանք», 1910, № 4, էջ 14:*

ջոց չունենան անդրադառնալու իրենց երկրի ներքին վերաշինութեան մասին խորհելու. ինքը մշտապէս մնայ իւր պէկական դիրքին վրայ, օգտուող պղտորութիւններէն ու ծծող միշտ ժողովրդի ուղն ու ծուծը»[16]: Այսինքն, մեղավորը մի Մուրթուլա բեյ կամ մի քանի այդպիսիներն են, ովքեր կատարում են վերոնշյալ ոճիրները: Իսկ քուրդ ժողովրդի մեծամասնությունն անմեղ է ու անբիծ: Տեսակետ, որն այնքան էլ չի համապատասխանում պատմական ճշմարտություններին:

«Աշխատանքը» զգուշավոր մոտեցում էր ցուցաբերում ներքին և արտաքին շատ երևույթների նկատմամբ՝ ձգտելով անհարկի տուրք չտալ գաղափարական զանազան կրքերին ու զգացմունքներին: Նմանօրինակ զգուշավոր դիրքորոշում նա որդեգրեց Բալկանյան հակամարտության («կնճռի») հանդեպ: Առաջին իսկ համարներից շաբաթաթերթը ուշադրության առանցքում էր պահում Բալկաններում և նրա շուրջ ընթացող զարգացումները՝ «Բալկանեան կնճիռները» ընդհանուր խորագրի ներքո հրապարակելով տեսական-վերլուծական նյութեր:

«Աշխատանքը» անհանգստություն էր հայտնում Բալկաններից շարունակ ստացվող ցավալի լուրերով: Նշվում էր, որ այդ իրադարձությունները կատարվում են այն ժամանակ, երբ «մենք կարօտ ենք խաղաղութեան, նիրուելու ստեղծագործիչ աշխատանքի եւ շինիչ գործի»[17]: Խմբագրության անունից ասվում էր, որ որպես գավառական պարբերական, հնարավորություն և ժամանակ չունեն վերոնշյալ հակամարտության շուրջ ընդարձակ ուսումնասիրություններ կատարելու, սակայն սեղմ չափերով պետք է ձգտեն ցույց տալ այն պատճառները, որոնք ծնունդ են տալիս այդ բարդ ու վերքոտ կացության:

Այստեղ պարբերականը հանդես է գալիս ընդհանուր հայրենիքի՝ Օսմանյան տերության անվտանգության ու խաղաղության դիրքերից՝ նշելով, որ մոտենանք խնդրին անկեղծությամբ, «առանց վերապահումի միայն Օսմանեան հայրենիքի և նրա բաղկացուցիչ մասնիկների առաջադիմութեան վերջնական երջանկացման տեսակետից առաջնորդուելով: Մենք նպատակ չունենք վիրաւորելու որեւէ ազգութեան զգացումները եւ ո՛չ էլ վատաբանելու որեւէ կուսակցութեան: Մեր առաջ դրուած է վերածնւող Թիւրքիայի ներկան ու ապագան եւ իբրեւ այս երկրի առաջադիմութեան ու բարգուաճման համար աշխատող մի անհատ, պարտ ենք համարում մեր մտածածներ ասել հրապարակօրէն»[18]:

«Աշխատանքի» յուրաքանչյուր համարի առաջնորդող հոդվածներում շոշափվում էին ազգային կյանքի կարևորագույն կողմերն ընդգրկող երևույթներ, արվում՝ սուր, արդիական հարցադրումներ: 1910 թ. դեկտեմբերի 5-ին հրապարակված «Ազգային շահերը» վերնագրով առաջնորդող հոդվածում խորունկ անդրադարձեր կան ազգա-

---

[16] *Նույն տեղում:*

[17] *«Աշխատանք», 1910, № 3, էջ 14:*

[18] *Նույն տեղում, էջ 15:*

յին կյանքում նկատելի մտահոգիչ երևույթների առնչությամբ: Քննադատության սլացքն ուղղվում է ազգային պատկան մարմինների գործունեությանը. «Ոչ մի բան այնքան ծիծաղելի և արհամարանքի արժանի չէ մեզ համար, որքան Վոսփորի ափին թառած, հայ ազգային մարմինների պաշտպանած ազգային շահերը»[19]: Պարզ է դառնում, որ ազգային կենտրոնական մարմիններն ականջալուր չեն հայության լայն զանգվածների հրատապ պահանջներին: Հետևյալ հարցադրումներն են հնչում. որո՞նք են հայ ժողովրդի կենսական շահերը, ո՞րն է հայ կյանքի լինել – չլինելու հարցը. «…Այստեղ, Վասպուրականի դաշտերում, բարձունքների վրա ժողովուրդը ահաբեկված աւազակային ասպատակութիւնից, ամէն րոպէ ենթակայ մահի, կոդոպտուելու ու թալանի… Ահա՛ և Մուշը հեծում է փլատակների աւերակների վրա թառած, դեռ նա կարոտ է սահմանադրական կարգերի, գլուխը ծռած, աչքերը արցունքոտ, կարօտ հողի, հացի և լուսի: Նրան կից Սասնոյ բարձրավանդակը իւր սովալլուկ կիսակենդան գոյութեամբ»[20]:

Ահա այսպիսի պատկերավոր բնութագրությամբ է պարբերականը ներկայացնում իրական վիճակն Արևմտահայաստանի գավառներում, որը գնալով առավել ցավալի ու վատթար էր դառնում: 1910 թ. դեկտեմբերի 12-ի խմբագրականում («Դէպի պարտականութիւն») ուշադրություն էր հրավիրվում Կովկասի հայության հիմնահարցերի և կրիտիկական պահերի վրա. «Կովկա՛սը… ըմբոստ, մարտական Կովկասը ուժասպառ՝ իր տված հուժկու եւ անխնայ հարուածներից… գալարւում է կարմիր տանջանքի ճիրաններում… փառք ու դափնիներ միայն եւ միայն օրհասական կռում պարտուածին, փառք նրան՝ ով ըստրկական քծնումով չի փաթաթւում յաղթողի ամբարտաւան արիւնոտ ոտքերին»[21]: Պարբերականի դիպուկ բնութագրմամբ՝ Կովկասի հայությունն է դարեր շարունակ եղել որպես շտեմարան ցեղային ազնիվ զգացումների: Հետաքրքրական է այս հարցադրումը. «Բայց պիտի ապացուցէ՞ տաճկահայը, իւր խոշոր պարտականութեան գիտակցութիւնը, եւ երախտագիտական զգացումը պիտի դրդէ նրան քաջալերութեան եւ օգնութեան փութալ նրանց, ովքեր օգնել են իրան, ցաւել նրանց, ովքեր լացել են իր տանջանքի օրերին»[22]:

«Աշխատանքը» հաճախ անդրադարձ էր կատարում նաև Վանի պետական մարմինների (քաղաքապետարան, դատարան, հարկային և այլն) գործունեությանն ու անխնա քննադատում նկատվող և նկատելի բացերն ու թերացումները: «Պետական կեանքը» խորագրով հրապարակվում էին քննադատական և վերլուծական նյութեր, որոնք աչքի էին ընկնում կյանքի և իրականության անթերի, խոր ճանաչումով, իրատեսական գնահատականներով, օգտակար խորհուրդներով: Այդպիսի մի ծավալուն

---

[19] *«Աշխատանք», 1910, № 5, էջ 3:*

[20] *Նույն տեղում, էջ 55:*

[21] *«Աշխատանք», 1910, № 6, էջ 5:*

[22] *Նույն տեղում:*

հրապարակում նվիրված էր Վանի քաղաքապետարանի («Մեր քաղաքապետութիւնը») գործունեությանը: Հոդվածը սկսվում էր բացասական նոտայով՝ նշելով, որ յուրաքանչյուր քիչ թե շատ խորհող քաղաքացի խորին անբավականության բողոք ունի իր կրծքի տակ՝ հանդեպ «մեր քաղաքապետութեան, որ տարիներ շարունակ եղել է մի թոյլ ու անկենսունակ մարմին, զուրկ ձեռներեցութեան ոգիէն, զուրկ հեղինակութիւն լինելէ եւ հեռու՝ իսկական ժողովրդապետական հաստատութիւն ներկայացնելէ»[23]: Խիստ, անխնա քննադատվում են Վանի քաղաքապետարանի պաշտոնյաները, ովքեր անկարող ու անճարակ են դարձել քաղաքում անհրաժեշտ կարգ ու կանոնն ապահովելու, հացթուխների, կառապանների, մսավաճառների և այլոց կամայականությունները սանձելու գործում: Վերոնշյալ խնդիրները կարգավորելու համար, ըստ պարբերականի դիտարկման, հարկավոր է երկու ուժ՝ նախ բարոյական, ապա՝ նյութական: Ըստ այդ դիտարկման, քաղաքապետարանը «նիւթապէս աննախանձելի դրութեան մէջ գտնուելով հանդերձ, ընդհակառակն ի վիճակի է օգտակար ձեռնարկներ ալ ընելու: Այստեղ է որ կը ծանրանալ, քաղաքապէտի պատասխանատուութիւնը»[24]: Որպես քաղաքապետի անպատասխանատվության ցուցիչ, մատնանշվում է քաղաքի ճանապարհների խիստ անբարեկարգ վիճակը. «Վանէն մինչեւ Պօլիս եւ Պօլսէն մինչեւ Վան ամեն մարդ իմացաւ որ Վանայ լճի վրա շոգենաւային երթեւեկութիւն սկսած է. բայց քիչերը իմացան գուցէ որ օրական միջին հաշուով 4600 հոգի երթեւեկող քաղաքի ճանապարհը թողուեցաւ ցեխի ու փոշիի ձեռք գերի. ինչպէս նաեւ քիչեր իմացան, որ յիշեալ նաւակը շինեցաւ ու գնուեցաւ այն դրամով, որ կոչուած էր ժողովրդի համար կենսական նշանակութիւն ունեցող ջրի տագնապը փարատելու համար»[25]:

1910 թ. դեկտեմբերի 19-ին «Աշխատանքի» խմբագրականը կրում էր «Մի առաջարկ» վերնագիրը, որը նվիրված էր երիտթուրքական իշխանությունների կողմից ընդունված Թահրիրի օրենքի գործադրության մեխանիզմներին: Նշվում էր՝ «Թահրիրի օրէնքը եթէ կատարի լրջութեամբ ու բարեխիղճ պաշտօնեաների ձեռքով, մեծապէս պիտի նպաստէ կնճռոտ ու վէրքոտ հարցի լուծման և որոշ չափով վերականգնի մեր կեանքի խանգարուած յարաբերութիւնը»[26]: Սակայն այդպիսի մի կարևոր ձեռնարկի լուրջ կատարման համար կարիք կա նախապատրաստական հիմնավոր աշխատանքի, մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրության, որի դեպքում միայն վերոնշյալ ձեռնարկը կարող է դրական հետևանքներ տալ: Շաբաթաթերթի դիտարկումով Վասպուրականը սահմանադրական կարգերի հաստատումից երկուսուկես տարի անց չունի մի կանոնավոր ամփոփ ուսումնասիրություն թե՛ վիճակագրական,

[23] *Նույն տեղում:*
[24] *Նույն տեղում, էջ 6:*
[25] *Նույն տեղում, էջ 7:*
[26] *«Աշխատանք», 1910, № 7, էջ 4:*

թե՛ հողային տեսակետից: Բնականաբար, այդպիսի անորոշ հողի վրա սկսած ձեռնարկը չի կարող տալ ցանկալի դրական արդյունք:

Եվ դա այն դեպքում, երբ Վանի վիլայեթը, ընդարձակ և ազատ հողաբաժիններ ունենալով հանդերձ, նրա ազգաբնակչության մի մասը տառապում է հողազրկությունից, սակավահողությունից ու միրիբայական զանազան այլանդակ ու անբարոյականացնող ձևերից: Ուստի՝ «արդէն պիտի տեղի ունենայ ձեռնարկը, կառավարութիւնը պարտաւոր է նախ լաւ ուսումնասիրել խնդիրը և ապա անցնել գործի: Եթէ այդ աշխատանքները չկատարուին ներկայիս, թահրիրը պիտի տայ ո՛չ թէ սպասւած արդինքը... այլ պիտի լինի սոսկ մի ուսումնասիրական ձեռնարկ երկրի համար»[27]:

Քաղաքական, հասարակական, տնտեսական բնույթի հրապարակումներից բացի, շաբաթաթերթի էջերում մշտապես ներկա էր կրթական–մշակութային, հոգևոր–բարոյական կյանքի համապատկերը: «Կրթական գործը գավառներու մէջ» խորագրի ներքո յուրաքանչյուր համարում ներկայացվում էին Վասպուրականի գավառների կրթական կյանքը, անցյալն ու ներկան, ուսուցման գործի կազմակերպման մեթոդները, սաների և մանկավարժների պատրաստվածությունը, դպրոցական շենքերի ու շինությունների վիճակը և այլն: Դրանցում անսքող հպարտություն կա հինավուրց ավանդույթներ ունեցող Վասպուրականի կուլտուր-կրթական գործին: Այսպես, խոսելով Շատախ գավառի կենտրոնը հանդիսացող Թաղի մասին՝ նշվում է, որ այն ունի նախանձելի դրություն, ուր «գրագէտները բաւական պատկառելի թիւ մը կը կազմեն»[28]: Շաբաթաթերթում հրապարակվեց «Կոչ Վանայ հայ հասարակութեան» վերնագրով հոդվածը, որով հրավեր էր ուղարկվում Վանի հայ հասարակությանը, մտավորականությանն առաջիկա գարնանը նշելու մեծանուն հայրենասեր, հրապարակագիր Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական գործունեության 40-ամյա հոբելյանը: Այդ նպատակով կազմվել էր հոբելյանական հանձնախումբ՝ ատենապետ Ա. Թերզիբաշյանի և ատենադպիր Չիթունու գլխավորությամբ: Հատկապես շեշտադրվում էր, որ Մ. Փորթուգալյանը «եղած է համարձակ եւ ազատական հրապարակագիր մը, ընտիր դաստիարակ մը, անկաշառ եւ անաչառ քննադատ մը եւ մեծ հայրենասէր մը, որու գործունէութեան համար յարգանք մը պիտի լինի վանեցոցս սրտեռանդ մասնակցութիւնը սոյն յոբելեանական հանդեսին»[29]:

«Աշխատանքի» էջերում հաճախ անդրադարձ կար գրական խնդիրներին, գրական մեծություններին ու գրական շարժման ընթացքին: Վերոնշյալ արծարծումները լույս էին տեսնում «Գրական ակնարկներ» խորագրի ներքո: Շաբաթաթերթի առաջին իսկ համարում գրական անդրադարձն ազդարարում էր, որ «1908 թ. յուլիս 10-ի պատմական մեծ օրից կը սկսի Արեւմտահայ նորագոյն գրականութեան վերածնուն-

---

[27] *Նույն տեղում:*

[28] *Նույն տեղում, էջ 7:*

[29] *Նույն տեղում, էջ 12:*

դը մամուլի ազատութեամբ»[30]: Ծանր գնահատականներ հնչեցնելով նախորդ ռեժիմի հասցեին՝ շեշտվում է, որ քմահաճ և անբնական հասարակական-քաղաքական մթնոլորտում չէին կարող երևան գալ գրական առողջ ուղղություններ, կյանքը վերստեղծող ձեռքեր ու գրիչներ: Բայց այժմ՝ հեղափոխությունից հետո, միտքն ազատ է. կարևոր է մտքի ստեղծագործող և հեղափոխող աշխատանքը, ուրեմն կարելի է այլևս միտքը և գրականությունը մոտեցնել ժողովրդին՝ «այնտեղից ստանալու իւր կենսական սնունդը՝ լինելով հայելի թիւրքահայերիս հասարակական, մտաւորական կեանքին»[31]:

Գրական թեմատիկայով մի այլ հրապարակման մեջ ասվում է, որ տաճկահայ ժողովուրդը մտավոր աշխատանքի է ելնում, նա է շարժվում և ձգտում նվաճել ազատ մտքերի կուլտուրական հորիզոնները: Ահա վերածնվող գրականության խորհուրդներից մեկը: Ըստ պարբերականի դիտարկման, արևմտահայ կյանքը ցայսօր չի ունեցել «բառի իսկական նշանակութեամբ գրականութիւն, որի ետեւը երեւար տառապող եւ տանջւող ժողովուրդը, նրա տնտեսական եւ բարոյական աշխարհը, նրա ամբողջ ֆիզիոնոմիան, ինչպիսին մենք գտնում ենք մեր Արևելեան բաժնի հատուածի մէջ»[32]: Ուշադրություն է հատկացվում այն հանգամանքին, որ արևմտահայ իսկական, բարձրարժեք գրականություն կարող է ստեղծվել գավառներում. «Կարին, Մուշ, Պիթլիզ, Վասպուրական, Տիգրանակերտ, Խարբերդ, Սվազ չեն ունեցել իսկական մտքով գրական, մտաւորական կեանք: Եւ Պոլսի ստեղծածը չի ժողովրդականացել, խորունկ արմատ չի ձգել: Սա փաստ է, կենդանի իրողութիւն»[33]:

«Աշխատանքի» գրական էջերում արծարծվում էին ոչ միայն հայ, այլև՝ համաշխարհային գրական մեծերին առնչվող խնդիրներ: 1910 թ. մի շարք համարներում ընդարձակ էջեր էին նվիրված ռուս գրականության դասական ներկայացուցչին՝ Լև Տոլստոյին: «Մտքի տիտանը» վերնագրի ներքո գրականագիտական վերլուծության է ենթարկվում ռուս գրողի ողջ ստեղծագործությունը փիլիսոփայական և հասարակական-քաղաքական լայն տեսադաշտի վրա: 1911 թ. հունվարի 2-ին՝ կիրակի օրը, լույս է տեսնում շաբաթաթերթի նոր տարվա անդրանիկ համարը, որում ամփոփվում էր պարբերականի գործունեության մեկ տարին. «Մի տարի՛... փոքրիկ ժամանակաշրջան, ստեղծագործիչ գրական աշխատանքի մի չնչին օղակ պատմությունը իրար միացնող...

Մի սահմանադրական տարի Թիւրքիայի համար... լիքը հազար ու մի բացասական ու դրական, հարուստ փորձնական, իրատեսական դասերով»[34]: Խմբագրակա-

---

[30] *«Աշխատանք», № 1, էջ 16:*

[31] *Նույն տեղում:*

[32] *«Աշխատանք», № 2, էջ 14:*

[33] *Նույն տեղում:*

[34] *«Աշխատանք», 1911, № 1, էջ 3:*

նը նշում էր, որ ժողովուրդների քաղաքակրթության և առաջադիմության առաջին պայմանը խաղաղության հաստատումն է երկրի մեջ: Որպեսզի ամեն մի քաղաքացի ու ժողովուրդ հնարավորություն ունենա զարգացնելու իր տնտեսական, քաղաքական ու կուլտուրական ընդունակությունը, որով զարկ պիտի ստանա ընդհանուր պետության զարգացումը:

Պարբերականը հետզհետև խստացնում էր դիրքորոշումը երկիրը կառավարող երիտթուրքական իշխանությունների հանդեպ: 1911 թ. սկսած «Աշխատանքի» էջերում ավելացան խիստ ոճով գրված խմբագրականներն ու հոդվածները, որում մերկացվում էին թուրքական իշխանությունների հակահայ խժդժությունները հայկական գավառներում: Ուշադրության առանցքում մնում էր հայ գյուղացիության ծանր, օրհասական վիճակը: 1911 թ. մայիսի 1-ին «Հարստահարութիւնը» խմբագրականում ասված է, որ երկրագործական աշխատանքների վերսկսման հետ նորից յուր դժբախտ մերկությամբ հարություն առավ ցավատանջ գյուղացիության մաշող հարցը: Եվ նորից տրտունջ, աղմուկ, «կցկտուր ու անորոշ պատասխան, յուսահատ դէմքերը սովատանջ գիւղացիութեան: Էշրաֆը, կատաղած ու յոփացած հողատէրը, քնած թմրած գիւղացիների վերզարթնումից փրփրած աջ ու ձախ իրանց շահատակութիւնների սահմաններն են ընդլայնում: Եւ անխղճաբար վռնտում գիւղացիներին իրենց դարեւոր սեփհականութիւնից կամ դադրեցնում դաշտային աշխատանքները»[35]:

Պարբերականը կոչ է անում, որ հասել է ժամանակը «սահմանադրական կառավարութեան ձեռնարկելու գործի... Պէտք է հասկանա, ըմբռն է կառավարութիւնը, որ ժամ է արդէն աւատապետներու սուր մագիլներից դուրս խլել աշխատաւոր գիւղացիութեանը»[36]: Նորից հորդորում է երկրում հաստատել խաղաղություն, արդարություն և օրենք: Եվ քանի որ ավատականությունն է ստեղծում անիշխանություն, խախտում օրենքը, դրժում կառավարության գոյությունը, «պետք է վերջապէս նրա գլուխը ճզմել...»[37]: «Աշխատանքի» էջերում հաճախ՝ գրեթե յուրաքանչյուր համարում, հրապարակվում էին նամակներ և թղթակցություններ՝ ուղարկված Վասպուրականի զանազան գավառներից: 1911 թ. ապրիլի 3-ի թվագրությամբ նամակ էր ուղարկվել Խոշաբից, որում հետևյալն էր շեշտված. «Մեր կեանքը անտանելի է, կատարեալ դժոխքի մը մէջ կը վառինք... մենք թէեւ երկրագործ, բայց այսօր կը զրկուինք երկրագործութենէ – վար ու ցանք անելէ, որովհետեւ գիւղիս էֆէնտին կ'արգելէ մեզ, նա կը բռնադատէ մեզ, որ գիւղից դուրս ելնենք, ի՞նչ ընելնիս չը գիտենք»[38]:

---

[35] *«Աշխատանք», № 14, էջ 1:*

[36] *Նույն տեղում, էջ 2:*

[37] *Նույն տեղում, էջ 3:*

[38] *Նույն տեղում, էջ 6:*

«Աշխատանքը» մեծ ուշադրությամբ էր հետևում Թուրքիայում ընթացող քաղաքական գործընթացներին, լուսաբանում և մեկնաբանում դրանք: Հետզհետև առավել բարձր ու հաստատակամ էր հնչում այն համոզմունքը, որ ժողովուրդը խորապես հիասթափված է երիտթուրքական հեղափոխության ընթացքից և արձանագրած արդյունքներից: Ըստ այդմ 1913 թ. հուլիսի 13-ին «Հինգերորդ տարեդարձ» խմբագրականում անդրադարձ էր կատարվում երիտթուրքական հեղափոխության հանդեպ ժողովրդական զանգվածների ունեցած վստահության կորստին, որի արգասիքն է հետզհետե լիովին անհրապույր ու անզարդ կերպարանք ստացող օսմանյան Սահմանադրության տարեդարձները. « … չոր ու ցամաք ու հեռու Ազգային ժողովրդական տօն ըլլալ է: Այն ինչ պէտք է որ անոնք թաղուած ըլլային ժողովուրդի հոգու մէջ շաղկապուած անոր զգացումներուն»[39]: Ըստ պարբերականի, այս ամենի պատճառների մեջ էականն այն է, որ Թուրքիայում ձևականորեն հաստատված սահմանադրական կարգերը համարյա ոչինչ չտվեցին ժողովրդին: Թավշյա ընթացք ունեցավ սկզբից մինչև ցայսօր և օրինական ժողովրդավարական լայն հեղաշրջումներ առաջ չբերեց:

Օսմանյան Սահմանադրությունը նույնիսկ իրավակարգ «չհաստատեց մեր երկրին մէջ, այլ գոյութիւն ունեցող բռնապետական կարգերը տապալելով տեղը ոչինչ դրաւ: Ուստի շատ բնական է, որ ժողովուրդը, եթէ չասենք թշնամաբար, գոնէ սառէ վերաբերում պիտի ցուցնէր անոր հանդէպ»[40]:

1913 թ. հուլիսի 20-ին «Ինչպէս կը գոհացնեն հայերը» խմբագրականում նորից է հիշեցվում այն մեծադրոդ խոստումների մասին, որ Բոսֆորի ափերից հնչեցվում էր կենտրոնական կառավարության շուրթերով հայկական պահանջներին գոհացում տալու համար: Սակայն հայերս չէ, որ պիտի հավատայինք թուրք պաշտոնյաների բարեմտությանն ու բարյացակամությանը, որոնց «դառն հիասթափութիւնները այնքան խորունկ կերպով ճաշակեր ենք»[41]: Կրկին համոզմունք է հայտնվում, որ թուրքական կառավարությունը ոչ թե ի վիճակի չէ, այլև չի էլ փափագել հայ ժողովրդին գոհացում տալ և քաղցր, անուշ խոսքերից այն կողմ չի անցել: Այդ քաղցր-անուշ խոսքերը միամիտ զանգվածներին կարող են խաբել միայն մի որոշ ժամանակ: Վաղ թե ուշ իրականությունը երևան «պէտք է հանէ» խոստումների սնանկությունը, և «ժողովուրդն ու կառավարութիւնը պիտի մնան կանգնած դէմ դէմի – մէկը խաբուողի և միւսը խաբողի դիրքին մէջ»[42]:

«Աշխատանքը» հրապարակավ մեղադրանքներ էր առաջադրում թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին հայ ժողովրդի հանդեպ արված վիրավորական, հայ-

---

[39] *«Աշխատանք», 1913, № 35, էջ 1:*

[40] *Նույն տեղում, էջ 2:*

[41] *«Աշխատանք», № 36, էջ 1:*

[42] *Նույն տեղում:*

հոյական արտահայտությունների համար: 1913 թ. օգոստոսի 10-ին պարբերականը նշում է, որ երկրորդ անգամ, օրը ցերեկով տեղի է ունենում անարգ դեպքը. թուրք պաշտոնյան ծանր վիրավորանք է հասցնում հայ ժողովրդի պատվին և արժանապատվությանը: Առաջին անգամ կոմիսար Վէֆիգն էր, ով հրապարակավ հայհոյեց ամբողջ հայությանը, ազգին: Այդ կապակցությամբ պարբերականի խմբագրությունը դատապարտում է վերոնշյալ երևույթը, բողոքելով կառավարությանը, որ միգուցե արժանի պատիժ տա հանցագործին: Սակայն ապարդյուն: Պախարակելի գործողությունը հրապարակելու համար անկաշառ ու անաչառ մամուլն է, որ կդատապարտվի արդարադատության կողմից: Դատարանը մեկ ամիս բանտարկության և հինգ լիրա տուգանքի «կը դատապարտէ «Աշխատանք»-ը, զօմիսէր Վէֆիգ վիրավորելու համար... իսկ 4 միլիոնէ բաղկացած ժողովուրդ մը եւ անոր սրբութիւնները հայհոյող Վէֆիգը անպարտ հրեշտակ մըն է»[43]:

Վեֆիգի անպատիժ մնալն ոգևորել է այլ սանձարձակ պաշտոնյաների: Նրանցից մեկն Ադանայի ոստիկանապետն է, ով հոծ բազմության ներկայությամբ «հայ ժողովրդի կրօնն ու սրբութիւնները կը հայհոյէ: Կը բողոքի կուսակալութեան որ կը խոստանայ պատժել բայց... երկրորդ օրն փողոցներ կը պտտէ ան»[44]: Պարբերականի հետագա մի շարք հրապարակումներ ևս ուղղված են վերոնշյալ երևույթի դատապարտմանը: «Ոտնձգութիւնները վախճան պիտի գտնե՞ն թէ ոչ» խմբագրականում նշվում է, որ այդ պաշտոնյաները, ովքեր օրը ցերեկով, պաշտոնական համազգեստներով և ուսնոցներով ոտքի տակ կկոխկրտեն սահմանադրությունը, դրանով իսկ կկոխկրտեն նույն այդ սահմանադրությամբ տրված անհատի և համայնքի ազատության իրավունքը: Այս առումով, ճիշտ ժամանակն է, որ «մեր կառավարութիւնը մտածէ վերջ տալ այս ախտաւոր հոսանքին, այլապէս օրէնքն ու սահմանադրութիւնը կը մնան դատարկ հնչիւններ, եւ կառավարութիւնը ինքն է որ կարատաւորէ իր անունը, կոչնչացնէ իր ազդեցութինը ու ժողովուրդի վստահութիւնը»[45]:

«Աշխատանքը» հստակ, ընդգծված ուշադրությամբ հետևում էր Թուրքիայում նահանգային և համապետական ընտրական նոր օրենքների մշակման, ընտրական մեխանիզմների կարգավորման գործընթացներին: Նրա էջերում խիստ քննադատության ենթարկվեցին օրենսդրական մոտեցումները: 1913 թ. հունիսի 8-ին նշում էր, որ նահանգային նոր օրենքը գլխովին բացառում էր զանազան տարրերի խմբական, քաղաքացիական իրավունքները: Օսմանցի անորոշ հորջորջումը «կը փոխարինէ ազգութեանց կոչումին: Մինչդեռ օրէնք մը լիակատար կերպով բաւարարութիւն կարող է տալ ժողովրդեան, երբ ան կապահովէ մեծամասնութեան հետ եւ փոքրամաս-

---

[43] *«Աշխատանք», № 39, էջ 1:*

[44] *Նույն տեղում:*

[45] *Նույն տեղում:*

նութեան իրաւունքը»[46]: Պարբերականի հստակ դիտարկումով, նահանգային այս նոր օրենքով, երիտթուրքական իշխանությունները ձգտում էին աղճատել ազգային փոքրամասնությունների ինքնությունն ու ինքնուրույնությունը և նրանց լուծարել «օսմանցի» ընդհանրական հանրույթի մեջ: Հայ ազգային պատկան մարմինները՝ պատրիարքարանը, քաղաքական կուսակցությունները, թեև բողոքի հզոր ալիք են բարձրացնում՝ չեղարկելու այս նոր օրենքը, սակայն թուրքական կառավարությունը մնում է անդրդվելի և բնավ չի նահանջում նախանշած ուղուց: Այս առիթով պարբերականի ղեկավարության դիրքորոշումը նույնպես կարծր ու հաստատակամ էր. «Կառավարութեան ընթացքը նախատինք մըն է ուղղուած ամբողջ հայ ազգի հասցէին և անոր արդար ու յառաջադէմ պահանջներուն... Հայ Ազգը որոշած է ապրիլ և չնահանջել իր պահանջներէն ոչ մերժումներու և ոչ ալ ջարդի և կոտորածի սարսափներուն առջեւ եւ ապրիլ ուրիշներու հետ հաւասար իրաւունքներով և հաւասար պարտականութիւններով»[47]:

Ոչ սակաւ առիթներով բարձրաձայն տագնապ էր արտահայտում շաբաթաթերթը, որ թուրքերը պարզապես «ջնջել կուզեն Հայ ցեղը Փոքր Ասիայէն, միակրոն և ապա տակաւ միատարր պետութիւն մը ձուլելու համար ոչ-հայ տարրերէն»[48]:

«Աշխատանքը» հետզհետե ավելի զգուշավոր դիրքորոշում էր որդեգրում այն ամենի հետ կապված, ինչն առնչվում էր երիտթուրքերի հնչեցրած լոզունգներին, կարգախոսներին և ընդունած որոշումներին: Այսպես, 1913 թ. սեպտեմբերի 28-ին շաբաթաթերթը տեղեկացնում էր, որ Կ. Պոլսում գումարված իթթիհատականների համաժողովը «սկսած է կարգ մը աղուոր որոշումներ տալ... որոնք կը խօսին արդէն իթթիհատի նոր ծրագիրին, նոր ուղղութեան եւ անոր գործադրելիք բարենորոգումներուն մասին»: Սակայն, ինչպես հուշում է խմբագրական հոդվածի հենց վերնագիրը («Ո՜չ, ալ չենք խաբուիր»), անցել են այն ժամանակները, երբ հայերը ծափահարում էին Օսմանյան պետության զարգացման համար հնչեցված յուրաքանչյուր միտքը: Հայ ժողովուրդն այլևս «թաղած իր յոյսն ու հաւատքը անցեալի արիւնոտ յիշատակներուն մէջ, վճռած է չխաբուիլ եւ հաւատալ միմիայն գործին, իրական, շոշափելի գործին: Նոր փաստեր անհրաժեշտ չեն ապացուցանելու համար թէ խօսքեր, խօստումներ նոյնիսկ պաշտօնական որոշումներ այս դժբաղդ երկիրին մէջ անարժէք են»: Իրավ, ճշմարտացի եզրահանգում: Վերլուծելով իթթիհատական համաժողովի որոշումները՝ պարբերականն ամփոփում է, որ դրանք որքան էլ գեղեցիկ ֆրազներով գունազարդված լինեն, միևնույնն է ոչ մի արժեք չեն կարող ունենալ, եթե դրան անմիջապես չհաջորդի գործը. «Գործին, ճշմարիտ և իրական գործին միայն կը հաւատանք,

---

[46] *«Աշխատանք», № 30, էջ 1:*

[47] *«Աշխատանք», № 5, էջ 1:*

[48] *«Աշխատանք», № 33, էջ 1:*

որովհետեւ շա՛տ խաբուեցանք եւ որոշած ենք ալ չխաբուիլ: Ձեզ պահէ՛ք ձեր որոշումները, ցոյց տուէք միայն փրկարար գործը»[49]:

«Աշխատանքը» իշխանություններին պարբերաբար կոչ էր անում երկրում զինաթափ անել և վերացնել ոչ միայն ավազակներին, այլև՝ ավազակություն ծնող պատճառները: Սակայն ապարդյուն. «Երկրի ամէն կողմ, ամէն անկիւն լիքն է աւազակներով, զինուած քիւրտ աղաներով, բայց կառավարութիւնը անօրինակ մտայնութեամբ մը կ'ուզէ չտեսնել զանոնք»[50]: 1913 թ. կեսերից հետո «Աշխատանքը» մեծ ուշադրությամբ հետևում էր հայկական բարենորոգումների շուրջ ընթացող քաղաքական, դիվանագիտական զարգացումներին: «Դուք քօնթրոլ չէք ուզեր, մենք բարենորոգում կ'ուզենք» վերտառությամբ հոդվածում խստագույն քննադատության էին ենթարկվում թուրքական իշխանությունները, որոնք ձայները մեկ արած ճչում են Եվրոպայի «երեսն ի վեր – «քօնթրոլ չենք ուզեր»: Ինչո՞ւ, որովհետև «քօնթրոլը կը վնասէ Թուրքիոյ անկախութեան, անոր վեհապետական իրաւունքներուն, որովհետև քօնթրոլը կը վիրավորէ եղեր օսմանեան արժանապատուութիւնը»[51]: Բարձր ու հատու հնչում է հետևյալ հարցադրումը. «Քօնթրոլ չէք ուզեր, հապա ի՞նչ կ'ուզէք: Կ'ուզէք որ այս երկիրը շարունակ տառապի՝ անապահովութեան և ջարդի մղձավանջին տակ: Կ'ուզէք որ շարունակուին սպանութիւններ, բռնութիւններ, պաշտօնական թէ անպաշտօն կամայականութիւններ: Քօնթրոլ չէք ուզէր, բայց կ'ուզէք որ ջարդուինք դեռ, կ'ուզէք որ երկարաձգո՞ւին Ստանաներ»[52]: Շաբաթաթերթի հարցադրումները հուզական հզոր լիցքերով հասնում են իրենց գագաթնակետին. «Դուք քօնթրոլ չէք ուզեր, բայց մենք բարենորոգում կ'ուզենք և կը պահանջենք անոր անմիջական գործադրութիւնը: Բարենորոգում կ'ուզենք, որովհետեւ մեր հայրենասիրութիւնը կը տարբերի ձերինէն: Մեր հայրենասիրութիւնը կը կայանայ բարենորոգումներու գործադրութեան մէջ, այս երկրի զարգացման ու բարւոքման մէջ, մինչդեռ ձերինը շարունակ ժխտելու, մերժելու մէջ ամէն արդար պահանջ, ամէն փրկարար աշխատանք»[53]:

«Աշխատանքը» իր՝ հայրենասիրական և արդարամիտ սկզբունքներով լի գործունեությունը շարունակեց նաև 1915 թ., երբ Վանն արդեն ազատագրված էր ռուսաց զորքերի ու հայ կամավորականների կողմից: Նրա էջերում շարունակ տրոփում էր առօրյա-ամենօրյա կյանքի զարկերակը: Չէին մոռացվում ազատության համար մղված պայքարի նահատակները: Փառք ու պատիվ էր ձոնվում հայտնի դաշնակցական գործիչ Իշխանի և նրա զինակիցների հիշատակին, որոնք դավադ-

---

[49] *Նույն տեղում:*

[50] *«Աշխատանք», № 1, էջ 1:*

[51] *«Աշխատանք», № 6, էջ 1:*

[52] *Նույն տեղում:*

[53] *Նույն տեղում:*

րության զոհ էին գնացել. «Փա՛ռք ձե՛զ նահատակ ընկերներ. Փա՛ռք ձեր հոյակապ կեանքին ու ձեր փառավոր մահուան: Ձեր մահը կամուրջ եղաւ ուրկէ անցանք մենք դէպի նոր կեանք եւ նոր օրեր... Օր պիտի գայ, որ ձեր շիրիմներ ուխտատեղի ըլլան ձերբազատուած Վասպուրականցու համար»[54]: Նրա հիշատակին նաև այլ նյութեր էին տպագրվում՝ ներկայացնելով որպես գրչի մարդ և հասարակական-քաղաքական խանդավառ ակտիվիստ:

Վանի ազատագրումից հետո ևս պարբերականը մատնացույց էր անում հասարկությանը հուզող հրատապ խնդիրները, բացերն ու թերությունները: «Կարևոր պակաս մը» թղթակցության մեջ բարձրաձայնվում էր, որ շատերը հույս ունեին, թե «ռուս բանակը Վան մտնելուն պէս փոսթ եւ հեռագիր պիտի հաստատուի ու մենք հնարաւորութիւն պիտի ունենանք արտաքին աշխարհի հետ յարաբերելու, այսպիսի ձեռնարկ մը չեղաւ ցարդ: Փոսթն ու հեռագիրը այսօր Վասպուրականցիի համար այն նշանակութիւն ունին, ինչ որ ջիղն ու արնատար երակը՝ մարդկային մարմնի համար: Մեր ժողովուրդը նիւթապէս և բարոյապէս կը կազդուրուի, կ'առույգանայ եթէ միջոց ունենայ յարաբերելու Ռուսաստանի և Արտասահմանի հետ»[55]:

Անգամ այդպիսի ծանր, եղեռնական օրերին «Աշխատանքը» ուշադրության առանցքում էր պահում հայ դպրոցական հաստատություններին և ուսուցչությանը՝ նշելով, որ հայ դպրաց դասը ներկայումս ամենադժնի նյութական պայմանների մեջ է և ուսուցիչների զգալի մասը «կը թափառի հոս հոն, անգործ, անստոյգ ապագայով, անօթի ստամոքսով ընկճուած երևոյթով»[56]: Հորդորվում էր, որ լքված հարստությունները, հանրային տրամադրելի միջոցները, փոխանակ անհատների սեփականությունը դառնալու, պետք է մասսամբ հատկացվեն հանրային կրթական հաստատություններին: Ազգային դպրոցների հոգսերն ու պահպանման բեռն առաջներում դրված էր Առաջնորդարանի վրա, այժմ, երբ գոյություն ունի «հայկական կառավարութիւն մը եւ կը գործէ, իր ամենամեծ պարտականութիւնն է եթէ ոչ ամբողջապէս իր վրայ վերցնել ազգային դպրոցներու հոգսը, գէթ ապահովել, որքան կարելի է մշտակայ աղբիւրներով, մեր ազգային դպրոցներու նիւթականը»[57]: «Պաշտոնի հոգեբանությունը» հրապարակման մեջ արձանագրվում և պախարակվում էին բացասական երևույթները վանեցի պաշտոնյաների շրջանում. «Հենց որ մէկը, պաշտօնական աթոռին վրայ կը նստի կամ պաշտօնեայ կը դառնայ, կարծես այլեւս կը խզուին իր եւ դռնովը դուրս մնացողներու միջեւ որեւէ յարաբերութիւն ու կապ»[58]: 1915 թ. հունիսի 15-ին թերթում հրապարակվեց Վանի նահանգի պաշտոնյաների ցուցակը՝ մարմին

---

[54] *«Աշխատանք», 1915, № 22, էջ 1:*

[55] *«Աշխատանք», № 23, էջ 1:*

[56] *«Աշխատանք», № 24, էջ 1:*

[57] *Նույն տեղում:*

[58] *Նույն տեղում:*

առ մարմին: Այն գլխավորում էր նահանգապետ Արամ Մանուկյանը, օգնականներն էին Սիրական Տիգրանյանը (ռուսահայ), Պարույր Լևոնյանը (ռուսահայ), դիվանապետը՝ Արտակ Դարբինյանը (արևմտահայ): Հետագա համարներում ևս խմբագրությունը շարունակում էր խարազանել, այպանել ժողովրդական խավերի շրջանում տեղ գտած հոռի բարքերը՝ նշելով, որ «Ընկերային վիճակն ու պայմաններն են որ կստեղծեն բարքեր: Եւ եթե քաղաքակրթութեան ամբողջ բարիքներ տարիներով վայելող ազգեր զերծ չեն ախտաւոր յատկութիւններէ, ի՞նչ կրնայ ներկայացնել վանեցի անհատը, որ դարերու ստրկական լուծն ունի կրած իր վզին վրայ և բարբարոսութեան հարուածները՝ իր մէջքին»[59]:

Եղեռնական մահաբեր օրերին պարբերականը հորդորում էր որդեգրել հայ որբերին՝ նշելով, որ շուրջ 1000 որբեր Վանի շրջանակներում կարոտ են խնամքի և գթասրտության[60]: Կոչ էր արվում հարուստներին, որ անմիջապես ներկայանան խմբագրատուն և կոնկրետ պարտավորություններ ստանձնեն որբախնամ հանձնախմբի առջև:

Պարբերականը, ծանր, տագնապալից պահը կարևորելով, կոչ էր անում թողնել մանր-մունր անձնական հաշիվները, վանել անհատական ձգտումները, դատապարտել «անձնական շահ ու տենչանքներ եւ առաջ քաշել ընդհանուր շահը, ազգային ապագայ գոյութեան խնդիրը՝ բոլոր մտածումներ, բոլոր ձեռնարկներ ուղղելով դէպի այդ մեծ ու կենսական հարցը»[61]:

Ըստ թերթի, ազգովին կռվելու և ազգովին ապրելու ժամանակն է և հանուն ազգային գոյատևման, հարկ է գոնե այսօր թողնել մանր խնդիրները:

Որպես ամփոփում նշենք՝ երիտթուրքական հեղափոխությունից հետո Վանում հրապարակված «Աշխատանք» շաբաթաթերթն աչքի էր ընկնում իրականության ռեալ, ճշմարտացի պատկերումով, հայ հանրությանը հուզող խնդիրների ու տագնապների անկեղծ ու անվախ բարձրաձայնումով, հայապահպանության և ազգային նպատակների իրականացման ներքին դրամատիզմով ու ոգեշնչվածությամբ:

---

[59] *«Աշխատանք», № 25, էջ 1:*

[60] *«Աշխատանք», № 27, էջ 1:*

[61] *«Աշխատանք», № 28, էջ 1:*

НАЦИОНАЛЬНЫЕ, ПОЛИТИЧЕСКИЕ, ОБЩЕСТВЕННЫЕ ВОПРОСЫ НА СТРАНИЦАХ ЕЖЕНЕДЕЛЬНИКА «АШХАТАНК»

АРМЕН КАРАПЕТЯН

Р е з ю м е

На страницах еженедельника «Ашхатанк» (1910–1915 гг.), издававшегося в Ване, поднимались и обсуждались многочисленные национальные, социально-политические и культурные вопросы. «Ашхатанк» смело обличал правительство младотурок в отсутствии желания прекратить царящие в стране произвол и насилие. В еженедельнике освещались вопросы, волновавшие Ван-васпураканское сообщество, проблемы, актуальные для общественно-политической и повседневной жизни вилайета. «Ашхатанк» пытался вселить в армянский народ надежду и уверенность в собственных силах.

NATIONAL, POLITICAL, SOCIAL ISSUES IN THE PAGES OF “WORK” WEEKLY

ARMEN KARAPETYAN

S u m m a r y

In the pages of the Van “Work” weekly (1910–1915) nimerous national, social-political and cultural issues were raised and discussed. The “Work” was criticizing bravely the Young Turks Empire with the purpose of severing violence and lawlessness in country and confirming right system. In the weekly there were also elucidated big and small issues disturbing people of Van-Vaspurakan, problems, actual for social–political and everyday life of the vilayet. “Work” tried to inseminate hope and belief in own forces for all Armenians.